Սեմինար գիտնականների ու գիտությունը լուսաբանող լրագրողների համար

Մի քանի անգամ «**Ազգը**» գրել է, որ ձեւավորվել է գիտական լրագրության խումբ գիտության ոլորտն ավելի լավ լուսաբանելու համար: Գիտությամբ հետաքրքրված լրագրողների առաջին սեմինարը կազմակերպվել էր Բյուրականի աստղադիտարանում, որին ապրիլի 19-ի համարում «**Ազգը**» եւս անդրադարձել էր: Խմբի հաջորդ սեմինարը լինելու է մայիսի 6-ին ժամը 18.00-ին՝ ԳԱԱ գիտակրթական կենտրոնում: Թեմատիկ սեմինարը լինելու է արտերկրային քաղաքակրթությունների վերաբերյալ: Սեմինարին կարող են մասնակցել ինչպես գիտությունը լուսաբանող լրագրողներն, այնպես էլ գիտնականները: Մասնակցելու համար ցանկացողները կարող են գրանցվել՝ ուղարկելով նամակ aregmick@yahoo.com կամ aregmick@aras.am հասցեներին: Ձեկուցումների համար դիմելու վերջնաժամկետը մայիսի 4-ն է, որից հետո կկազմվի սեմինարի վերջնական ծրագիրը: Իսկ վերջնական ազդագիրը մասնակիցներին կուղարկվի մայիսի 5-ին:

Ի. Պ.